

Տարեկան գինը 10 րուբլ կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Պատրագրադարացիք գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն շաբաթով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱ-
ԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1880 թւին

ԿԸ ՀՐԵՏԵՐԵՎԻ ԵՄԵՆ ՕՐ, բացի տոն և տոների հե-
տեւէն օրերէն:

Լրագրի դիրքը և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում
ենք ՍԵՓԵՎԵՆ ՀԵՌԵՎԻՐՆԵՐ: «ՄՇԱԿ» տարեկան գինը
10 րուբլ է, կէս տարվան 6 րուբլ: Գրվել կարելի է ՄԻՆՅՆ
ԽՄԻՆԻՐԵՏԵՆ մէջ:

ԵՌԵՆՁԻՆ ՀԵՄԵՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը:
Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցեով ՏԻՓ-
ЛИСЬ Редакция «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց թատրոնի գործը:—Ներքին տեսու-
թիւն: Նամակ համախոց: Նամակ խմբագրին:
Ներքին լուրեր:—Արտաքին տեսուչի իշխան:
Արտաքին լուրեր:—Մշակութային հեղափոխութիւն:
—Բանասիրական: Բողո-
քացաւ կամ բողոքաւ դիմադրելու կոչված տե-
սակը:

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆԻ ԳՈՐԾԸ

I

Մի քանի ամիս է արդէն, որ
ամբողջ քաղաքը խօսում է հայոց
թատրոնական ներկայացումների

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲՈՎԱԶԱՅԱԿԻ ԿԱՄ ԲԱՅԱՅԱԿԻ

Դիֆթերիա կոչված տեսակը

Հիւանդի բերանը մաքուր պահելու համար հար-
կաւոր է ողողել բերանը աղաջրով առանձին կէս
թէյի դրգալ աղ և լուծելով մի թէյի բաժակ ջրի
մէջ—ողողել օրական վեց անգամ—ողողել ոչ միայն
հասարակ կերպիւ, այլ և դուրսը յետ դեղով,
զղողաքննելով (gargariser): Լաւ է նոյն բանը
անել օրական դոնեա չորս անգամ և թոյլ օղիով:
—Խրաքանչիւր երկու ժամ բերանով ներշնչել և ու-
ման (եփող) ջրի գոլորչի: Դրա համար կարելի
է յարմարեցնել որ և է անթիւ,—բայց կրպակնե-
րում կամ դեղատաներում ծախու կան այդ դեղքին
յարմարեցրած անթիւներ, որոնք գոլորչիքը հեռու
չնշափողի և անգամ թղթերի խորունկն են ցնցում
(ингаляционные аппараты): Ամենահասարակ և ձե-
ռքնուր է Զիգլերի գոլորչիքը և Dampf—Hydro-
cotton բերքաւոր—լեմբի: Այդ տեսակ հեղուկը

գոլորչիով ցնցող գործիքների (որոց փոխացուցիչ
գործիք են կոչում—pulverisateurs des liquides)
միջնորդութեամբ կարելի է և դեղ գործ դնել—վերց-
նել, զորօրինակ կէս թէյի դրգալ աղ, կամ նոյն-
չափ սոդա (այն սոդան, natrum bicarbonicum, որը
գործ է դրվում կիսալուրի հետ և որը ծախ-
վում է կրպակներում): Կայանք մի բաժակ ջրի
մէջ և գործ դնել: Մեքենան այնպէս է շինած,
որ գոլորչիքը ցնցում են ջուրը, որի մէջ դնել է
հայցրած, իսկ հիւանդը բերանը բացած և գործի-
քին մօտիկ նստած չունչ է առնում: Ծննդաւոր-
թիւնը մի քառորդ ժամ պէտք է տևի—և իւրա-
քանչիւր երկու ժամ պէտք է կրկնուի: Հէնց
սկզբումը երբ որ ցաւը յայտնուեց, պէտք է տալ
քինայ (chininum sulphuricum—քինայ—քինայ):
1—2 տարեկան երեխաներին 3 գրան (ցորնաչափ)
օրական 3 անգամ: 3—5 տարեկաններին 5 գրան,
օրական 3 անգամ: 6—10 տարեկաններին 6 գրան
օրական երեք անգամ: 11—15 տարեկաններին 8
գրան օրական երեք անգամ: Մեծահասակներին
10 գրան օրական երեք անգամ:

Պարտ է համարում աւելացնել, որ յիշեալ
չափերից աւելի և աւելի էլ կարելի է անվնաս
տալ, իսկ երեքնմ մեծ չափերով տալը անհրաժեշտ
է: Փինայի բժշկարար ներգործութիւնը այն-
չափ ազդելի է—կազմուածքի վրա, մանաւանդ
դիֆթերիաում, որ երբ այդ ցաւի սկիզբը կարծ-
վում է, բայց կասկածվում, աւելի լաւ է տալ
քինայ, քան թէ չը տալ:

Թիւններ ունեն այժմեան մշտա-
կան հայոց խմբի ներկայացումները:
Բացի Սունդուկեանի երկու
պիեսաներից և մի պատմական
ողբերգութիւնից, մնացած բոլոր
պիեսաների նիւթերը, որոնք ներ-
կայացվեցան այս տարի, ոչ թէ
միայն հայոց կեանքից վերցրած
չեն, բայց ոչինչ նմանութիւն էլ
չունեն հայոց թէ հին և թէ ար-
դեան կեանքի հետ: Պիեսաների
բովանդակութիւնը ոչ թէ միայն
օտարոտի է մեզ համար, բայց և
առհասարակ հրէշաւոր է: Թոյն,
սուր, ատրճանակ, մենամարտու-
թիւն, սպանութիւն, անձնասպա-
նութիւն, բանդ,—ահա բոլոր պի-
եսաների բովանդակութիւնը:

Լեզուի կողմից էլ չէ կարելի
ասել որ մեր այժմեան հայոց բե-
մի վրա գործածվող լեզուն կա-
րող է կրթիչ ազդեցութիւն ու-
նենալ մեր հասարակութեան վրա,
որ մայրենի լեզուից երկար ժա-
մանակ զուրկ մնալով, կամենում
է կրկին ընտելանալ իր ազգային
լեզուի գործածութեանը, որովհե-
տե մեր թատրոնական կոմիտէի
առաջնորդութեամբ տրվող պիե-
սաներում տիրապետող լեզուն մի
չեղած, անլեզի, հրէշաւոր խառ-
նուրդ է հայոց արեւելեան և ա-
րեւմտեան բարբառների....

Ինչ է, ուրեմն, պատճառը, որ
թատրոնը այսքան զբաւում է

այժմ հային, որ առաջ միշտ ան-
տարբեր էր դէպի իր մայրենի
լեզուով տրվող ներկայացումները
և առհասարակ միշտ անտարբեր
է դէպի ամեն բան, որ մայրենի
լեզուին է վերաբերվում...

Մենք կարծում ենք որ պատ-
ճառները շատ բազաղբեալ են,
բայց գիտաւորապէս երեք պատ-
ճառ կայ:

Մինք հայի ժամանակի ոգին է:
Երկրորդը որ հայը, շատ լաւ
գիտենալով որ սարսափելի շատ
պակասութիւններ ունի, միշտ ա-
ւելի է համակրում անտարբեր, իր
կեանքից դուրս, օտար երևոյթնե-
րին, քան թէ իր հասարակական
և ընտանեկան տգեղ երևոյթների
քննադատութիւններին:

Գուցէ եթէ թատրոնական
ամբողջ ընկերութեամբ բազկացած
լինէր Սունդուկեանցի պիեսաների
պէս զբաւածներից, որոնք խստու-
թեամբ քննադատին թէ թիֆ-
լիսցու և թէ առհասարակ հայի
պակասութիւնները, — հայերը մի
երկու անգամ կերթային թատ-
րոն, բայց վերջը կը փախէին այդ
տեսակ ներկայացումներից: Գուցէ
զրա մէջն է գաղտնիքը որ այն
լրագիրը կամ ամսագիրը, որ շոգո-
քորթում է հայի բոլոր պակա-
սութիւններին, դարեւոր փտած
և հրէշաւոր աւանդութիւններին,
կամ անտարբերութեամբ է վերա-

յետին պատերը, կամ շնչափողը լի է փառերով,
լորձուքով, կամ թաթախով, պէտք է տալ փոխեց-
նող, սիրտ վեր բերող փոշի—взвешный порошок,
և կամ գրգալի ծայրով այնքան գոգրել կանը (մատը
տալ) որ հիւանդը փոխի նոյն այդ դրութեան մէջ,
մանաւանդ երբ հիւանդը քնկոտ է, թոյլ է և հազալ
անգամ չը գիտէ—շատ օգնում է մի երկու
փարչ (անթիւ է) շատ սաւը ջուր անելը բարձրից
տկրաբար հիւանդի գլխին, այնպէս որ գաղա-
թից սկսուի և անցնի ծոծրակովը և մէջքովը:
Դրանից հիւանդը ուշքի է գալիս, սթափում է
քնից և հազում ու այդպիսով օղի ճանապարհ-
ները մաքրվում են: Գալով հիւանդի պահելու
ձեռն, ներքին լինի ինձ կրկնել այն, որ անհրաժեշտ
է բաժանել, առանձնացնել հիւանդին միւս երե-
խաներից—սենյակի օդը մաքուր պահել, նրա ան-
կողմը օրական մի քանի ժամ փակ բաց օդում—
դուրսը: Նրա բոլոր արտաթորութիւնները այրել
կամ հողի մէջ խոր թաղել—և նոյն իսկ հիւանդին
նայեցող—հոգատարին խորհուրդ եմ տալիս շատ
անձնագոհութիւնից իրան ազատ պահել և միտ զգոյշ
մնալ վարակվելուց: Կերակուրը պէտք է լինի
գլխաւորապէս ջրային և ոչ կոշտ: Սառը ջուրը
երբեք չը խնայել հիւանդից: Գոյ կայթ խմցնելը
օգտաւէտ է, թէյը, սուրճը, լիմոնի ջուրը, գիթերի
ջուրը նոյնպէս: Անհրաժեշտ պէտք է տալ հիւանդին
մսի ջուր (бульон): միւսը շատ վերցնել, ջուրը սակաւ
և աղը պակաս ցանել: սառցրած մսի ջուրը բա-
ժանով կարելի է շարունակ տալ: Առհասարակ

բերվում դէպի մեր կենսանքի տղեղ կողմերը, միշտ աւելի աջողութիւն ունի, քան թէ այն լրացիլը որ անխնայ կերպով մտրակում է հայ հասարակութեան բոլոր վատ կողմերը... Հայը չէ սիրում որ նրան քննադատեն... Հանգիստ և անգործ թողեցէք նրան իր փութիւնէն մէջ, — և նա շատ ուրախ կը լինի:

Այժմեան մշտական խմբի ներկայացումները իրանց նիւթերով, իրանց բովանդակութեամբ չեն փրաւորում հային: Այսքը կատարվում է կամ Իտալիայում, կամ Սպանիայում, կամ Ֆրանսիայում, — և հայը շատ ուրախ է: Նրան այդ բոլորը չէ վերաբերվում: Իր ուղեղը լարելու, իր խղճմանը ճշտելու, իր կենսանքի մէջ այս կամ այն հին, փտած, մաշված կողմը բանդել ջանալու և նրա տեղը նորը ստեղծելու հարկաւորութիւն չը կայ, որովհետեւ ոչ հարկաւորութիւն, ոչ էլ հնար կայ բեմի վրա ներկայացվող օտար, իր համար կատարելապէս խորթ կենսանք իր կենսանքի հետ համեմատելու: Թատրոնից դուրս գալով հայի խղճմանը հանգիստ է... Բոլորը ինչ որ ներկայացրել են իր կենսանքի հետ մազի չափ նմանութիւն չունի: Թող Սպանիայում կամ Ֆրանսիայում կոտորվեն, միմեանց թունաւորեն, միմեանց սպանեն, — մեզ ինչ... Իսկ մենք թատրոնից դուրս ենք դալիս հանգիստ ոգով, կարող ենք շարունակել բամբասել, ձնշել, հարստահարել, փտած հնութիւնը, փաստակար աւանդութիւնները պաշտպանել, խաբել, մեզ մարդասէր ներկայացնել, բայց կենսանքի ամենատուրը բաների մէջն ան-

գամ լինել փողատեր և նիւթապաշտ, ամեն բան փողով կշռել և ամեն բան փողով ծախել...

Հայ, մեր կարծիքով այժմեան հայոց թատրոնի աջողութեան զխաւոր պատճառը:

Մի երրորդ պատճառ էլ կայ, որ նոյնպէս կապ ունի հայի փոխախրութեան հետ:

Գերմանացի աղքատ ուսանողը քէֆ անելու ժամանակ, էժան գարեջուր, կամ թթված գինի խմելու ժամանակ, ծիծաղելով աւտում է «ինչ որ ես վճարում եմ, այն պէտք է մինչև վերջը խմեմ, թէ և շատ վատ էլ լինէր...»

Երևում է որ հայն էլ այսպէս է դատում: Հայ հասարակութիւնը տուել է կոմիտեին 8000 բոլոր բացի սորանից նրան պարտաւորեցրել են մի տարով արօնը մէկն աւտել, — փստ են թէ լաւ են ներկայացումները, պէտք է գնալ թատրոն, որովհետեւ շատ փող է տուած...

Կոմիտեի տղ, պէտք է խոստովանվել լաւ է ըմբռնել հայի յատկութիւնը:

Մենք գիտենք թէ ինչ կարող են մեզ պատասխանել և այդ պատասխանները մենք կը բնկենք մեր հետեւեալ յօդուածում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՄԱՍԽՈՒՑ

26 նոյեմբերի

Խնդրեմ տեղի տալ ձեր պատուական լրագրի մէջ իմ յետագայ քանի շաբաթ գրութեանը: Աշխարհիս լուսաւորեալ տղութիւնների, աղ-գութիւնների կամ հասարակութիւնների կենսանքը ընթացքում, եթէ նկատվում է մի պակասութիւն,

այսպիսի հիւանդները պէտք է ստէպ ստէպ, բայց փոքր առ փոքր ուտեն: Երբ հիւանդը թոյլ է — երակները թոյլ են զը-գում — նախը փառ է — սրտի զարկերը հետզհետեւ կորցնում են իրանց ուժերը և սիրտը կարող է խալած դադարել գործելուց, ահա՛ յարմար ժա-մանակ գործ դնելու կոնեակ. 3—4 տարեկան և-րեկային անգամ օրական կարելի է տալ և պէտք է տալ չորս հայի գրգռ կոնեակ. կոնեակը կրի-կանցը սիրեցնելու համար, կարելի է չաքարաջրի կամ մուրաբայի հետ խառնած, առնելով մի կո-նեակ երկու չաքարաջրի: Կոնեակի հետ, կամ առանձին, պէտք է տալ ուժեղ գինիների՝ Տոկայի, գինի, պորտլէյն կամ, բորգո կամ լաւ մաքուր և հին երանու կամ կախիթու գինի: Գինին տալ է բաւականաչափ քանակութեամբ միշտ օգուտ է հետ հիւանդութեան համար, բայց թէ մանաւանդ նրա սաստկութեան ժամանակը և նոյնպէս վերջն-րում: Նոյն իսկ կաղմուածքը ամրացնելու մտք-հիւանդութեան վերջնապարտ յետոյ գինու հետ կարելի է տալ և քինայ, բայց փոքրագոյն չափե-րով՝ երկու գլան, օրական երկու անգամ: Այդպի-սի ամրացնող, կաղմուող նիւթեր հարկաւոր է տալ հիւանդին, որովհետեւ դիֆտերիտից յետոյ հա-մարեա միշտ յառաջանում է թուլութիւն, անդա-մաղծութիւն և արեան պակասութիւն, որոց բը-ծակելու առաջին պայմանն է ամրացնող միջոցն-րը: Ինձ մնաց խոսել այժմ երկու ամենագործի-միջոցների վրա՝ որոց մէկը ամենագործի մահաբեր,

իսկ միւսը ամենագործի կենսատու միջոցն է, կամ գոնեա հիւանդին և հիւանդատիրոջ վերջին յօդը: Առաջին միջոցը մեր ժողովրդի սիրածն է, իսկ երկրորդը բժշկական գիտութեան: Իմ նպատակն է համոզել ժողովուրդը ձեռք վերցնել իրա սիրած ճիշտ մահաբեր միջոցից և հաւատով դիմել բժ-կական հերոսական փրկարար միջոցին: Խոսքս մի կողմից արեւն առնելու և միւս կող-մից շնչափողոցաւորման (Tracheotomia) — tracheo- TOMIA վրա է: Ինչ ցաւ կայ, որ բժշկելու համար մեր ժողո-վրդի առաջին և վերջին զօրեղ միջոցը չը լինի ճարին թողնելը: Մեր ժողովրդի հասկացողու-թեամբ ամեն ցաւ առաջ է դալիս երեք պատճա-ռից. առաջինը միւս երկուց — այդ, եթէ կարելի է այսպէս անուանել, ցաւը ցաւերն են՝ սաթկում, վարդախիւանդ, բողաղցաւա և այլն. երկրորդը քա-մուց, կողքի ծակոց, գլխացաւ (բուլար), ճանե-րի ցաւ (յօղացաւ) և այլն, երրորդը՝ ճւրճ՝ բա-րակացաւ, արեան սակաւութիւն և այլն: Մնում է ևս ցաւոց մի շարք, որոց պատճառը հետաքը-քիրն է ժողովրդին: Առաջին տեսակը համարեա միշտ բժշկական չէ: Արեւն թողնելու երկու տեսակի է բաժանվում թէ ժողովրդի և թէ բժշկականութեան մէջ՝ ընդհանուր, երբ երակն (բողաղցաւ) կամ դարկերակն են (ջիգաթր դանի) բանում, կամ տե-ղական՝ տղրուկ (սուլուկ, ծուրէլայ) կայցնելը կամ պող (կոտոշ) կայցնելը և յետոյ թրաշել կը-

մի ընդհանուր շանուց շնատու ուղղութիւն, կամ հիմնարկութիւն, իսկոյն գտնվում են և ընդհա-նուր շանուց վրա մտածող և հոգացող անձինք, ո-րոնք լրագրութեան միջոցով, կամ ծաղրածու գր-վածներով թատրոնների միջոցով, որը ծաղրում են, և ընդհանուր մարդկութեան ուղղութիւնը դարձնելով այն շնատու ուղղութեանց վրա, ըզ-գուշացնում են ժողովրդին և նրանով աշխա-տում նրա կենսանքի մէջ եղած սխալ ընթացքը ուղղելու: և զրէթէ՝ նրանց յաջողվում է միշտ ի-րանց նպատակին հասնելու, որովհետեւ այն հասա-րակութեան կամ ազգութեան ամենայն մի խելացի անդամը զգում է այն ցուցմունքների իրաւացի լի-նելը և աշխատում ընդհանուր ուժով վատութեան առաջն առնել: Մեր Ռուսաստանի հայերին մէջ քանիցս անգամ Վշակը իրաւացի նկատել է խո-շոր պակասութիւններ և այն պակասութիւնն-ներն տուել իսկ մեր երեսույն, բայց մենք փոխանակ նրան շնորհակալութիւն անելու, որ ցոյց է տուել մեր պակասութիւնները մեզ, և, խոստովանելով մեր մեղքերը՝ մեր պակասութիւններն ուղղելու, աշխատել ենք ընթերցող աշխարհի առաջ արդարացնել մեզ (սա էլ հայի մի լատկութիւն է) և վատաբանել Վշա-կը նրա իրաւացի ցուցմունքների պատճառա-ւ: Թէ և ինքներս մեր սրտի մէջ համոզված ենք ե-ղել նրա իրաւացի լինելու: Մենք վատաբանել ենք Վշակը պատճառ բերելով (թէ և սխալ), թէ ինչու պէտք է նա մեր պակասութիւններն ի-մացնէ օտարին, փոխանակ օտարելու թէ մենք ինչու պէտք է ունենանք այս ինչ պակասութիւնը, որ օտարներն իմանան: Այժմ միայն Վշակին, այլ մեզանից ամեն մի անհաւաք պարտաւոր է, իրեն ընդհանուր մարդ-կութեան (մանաւանդ հայութեան) անդամ, ըստ իր կարողութեան հրապարակ հանել այն ամենայն պակասութիւնները, որոնց մենք նկատել ենք և ո-րոնք շնատակար են ընդհանուր մարդկութեան շանքին: Ի՞նչ հարկէ, ամեն մի մարդ, ամե-նայն մի ձեռնարկութիւն կամ հիմնարկու-թիւն, ամեն մի հասարակութիւն, ամենայն մի ազգութիւն կարող է ունենալ իր շնատակար կող-մերը, որոնք եթէ զրկվու լինէին լրագրութեանց մէջ թողվել և թանգը չէին բաւական դոտիլի նրանց հրատարակելու (չեմ ասում ոյժ ու կարո-ղութիւն), բայց գոնեա խոշոր պակասութիւնը մեր կարողութեան չափ չը պէտք է զանց անենք: Մեր Եւրոպայի ունի նոյնպէս իր պակասութիւն-ները. ուրեմն և պատուելի չամախեցիք պէտք է ներքին ինձ, որ ես լրագրութեան միջոցով ցոյց եմ տալու Վշակին ընթերցողաց (այսպէս ուրեմն և ի-րանց) իրանց քաղաքի մի քանի ընդհանուր մարդ-կութեան շանքին շնատու պակասութիւնը, ո-րոնց կարելի է կամ իրանք չեն նկատում և կամ եթէ նկատում են, ուղղութիւն չեն դարձնում նրանց վրա: Ես իբրեւ մէկ անցորդ, որ մի քանի օրվայ հիւր եմ Եւրոպայում, առ այժմ այնքան ծա-նօթ չեմ նրա ժողովրդեան ներքին կենսանքի, որ նկարագրեմ իր օգուտը և փաստակար կողմերովը և զայն թողնում եմ ապագայ, բայց այն, ինչ որ տեսնում եմ և ինչ որ մեծ վնաս է նոյն իսկ շա-մախեցնելին, նրա մասին չեմ կարող լռել: Խօս-քս տեղին հեռագրատան և զեղատան վրա է:

Առհասարակ այս երկու հիմնարկութիւնների նշանակութիւնը ժողովրդի կենսանքի մէջ ամեն-քին յայտնի է, այնպէս որ զրանց օգուտը նկա-րագրել ի՞նչու եմ համարում: Եւ թէ այդ երկու տեսերը ինչ դրութեան մէջ են մեր Եւրոպայում, ընթերցողը կարող են իմանալ յետագայ դէպ-քերից: Անցեալ շաբաթներում մի երեկոյ ժամը 8-ին մի հեռագիր եմ զրկում հեռագրատան խփելու բարեկամի մի ուրիշ քաղաք շատ հարկաւոր գոր-ծի համար, բայց քառորդ ժամ չանցած հեռագիրս յետ են բերում, ասելով թէ հեռագրատունը փակ էր: Միւս առաւօտը դարձեալ զրկում եմ ժամը 8-ին, այս անգամ մի կէս ժամ էլ զրան սպասե-տալուց յետոյ ընդունում են հեռագիրները: Հե-ռագիր տանողին հարցին թէ ինչու, երէկ փակ էր հեռագրատունը, այսպէս է պատասխանում այն-տեղի ծառայողը. «մեր հեռագրատան օրէնքի համե-մատ հեռագիրների ընդունելը լինում է երեկոյան ժամը 9-ից մինչև առաւօտեան ժամը 9-ը»: Այս ա-սելով ցոյց է տալիս մէկ վրէկ իբրեւ թէ օրէնքը նրա-նում դրած է: — «Եւ, լաւ, երէկ 8-ից քառորդ ժամ չանցած ես այստեղ էի և փակ տեսիլ: — «Մեր ժամացոյցը քաղաքի ժամացոյցի հետ չէ բա-նում, այլ Պետերբուրգի ժամացոյցի հետ» պա-տասխանում է ժողովրդի հեռագրատան ծառայո-ղը և քաղաքավարութեամբ ճանապարհ գցում հե-ռագիր տանողին: Եթէ արդարեւ հեռագրատան օ-րէնքումն այնպէս է դրած, ինչպէս ծառայողն է բացատրած, իրենից շատ դժուար կը լինի հեռագիր միջոցաւ գործ կատարողների բանը, որոնց ամեն մի ուղացած թուղթն կարող է մեծ վնաս պատ-ճառել, նաև դժբաղդութիւն: Բայց եթէ այն օձ թէնքը միայն Եւրոպայում համար է դրած, ուրեմն խեղճ չամախեցիք, որ այդ անպարմարութեան պատճառը միայն իրանց վրին է կապած: Դառնալով զեղատանը: Ամիս 23-ին, առաւ-տեան ժամը 8-ին ունենալով տանս հիւանդ՝ եղ-բորս զրկում եմ տեղին «Вольная аптека» կոչ-ված միակ զեղատունը զեղ առնելու, բայց եղ-բայրս չուտով յետ է գալիս և ասում թէ զեղա-տունը փակ էր: Մի ծառայ կար, որ ասաց զեղ-քնած են, երեք ժամից յետոյ արի (ասել է թէ կէսօրից յետոյ): Իմ գործն այնպէս է պատահում, որ կարողանում եմ երբօրս միայն ճաշից յետոյ ժամ 4-ին զրկել դարձեալ զեղատուն: Բայց նայ գալիս է 7-ի ժամին առանց զեղի և ասա՛ ինչ է պատմում ինձ: «Գնացել եմ զեղատուն, տեսա, այնտեղ հաւաքվել էին շատ հայեր և թուրքեր: Կային այնպիսիներ, որոնք գնազատում էին թէ հինգ ժամից աւելի է, որ սպասում են զեղ գնելու: Բայց զեղավաճառը այսինքն զեղ պատրաստող է ծախողը և ոչ զեղատան տէրը», որ մի ուսու է, չը կայ: Ես էլ նրանց հետ սպասեցի մինչև ժա-մի 7. վերջապէս եկաւ նա և մենք ուրախացանք, ասելով թէ, Տէրը նորա հետ, եկաւ, գոնէ առանց զեղի չենք գնայ տուն: Բայց երբ նա մտեցաւ մեզ, տեսանք, որ Բա-թուր երկրպագութիւն էր գնացած և դարձել է շատ օգետոված, այնպէս որ նորա շնորհով զե-ղատան յատակի բոլոր տախտակներովն միանգա-մից էր վազում: Այս տեսնելով մի կակարդ ձակ-տին կայցած պատուաւոր մարդ, դարձաւ դէպի

ի 21 նոյեմբ. 1879 ամի

Թիֆլիս:

Բ. Նաւասարկան

մեզ և
Բաթուր
ճառը կ
Կու ձեռ
այժմեան
լինեն, ո
չենք ուն
թեանը,
յիշեալն
կառավա
մենք էլ
տեղ, որ
Այժմ
վաճառ
գրած էր
մեմատ
գրած է:
հէք և
վարդը
նում, որ
գտնվե
կարող
մահ է
պէկը մ
լու ու
հասցնե
է կախ
հասցնե
ները ն
տեսեա
2 ժամ
ինչ պէ
նրան կ
ճանապ
լով իր
վիճակի
Ինչպի
նա այդ
զեղատ
մաց, ի
օգուտ
տոմսակ
Զայտ
եմ տե
երկուս
զուց
ներկա
կաղմը
խմբի մ
բարձր
թեան
կանն
միջոց
տան մ
ապնոր
յիշեա
տատ է
յաջող

[Faint mirrored text from reverse side]

